



Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Շարունակվող համագործակցություն

Սեպտեմբերի 3-ին ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը հանդիպում ունեցավ Եվրոպայի խորհրդի Երեւանյան գրասենյակի ղեկավար Լատալիա Վուտովայի եւ Եվրոպայի խորհրդի ծրագրի ղեկավար Լիաննա Ամիրբեկյանի հետ: Մասնակցում էին ոստիկանության շտաբի պետ Արմեն Դուկասյանը, քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Արտակ Կարապետյանը, ԶՀՎ վարչության անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման վարչության պետ Նելլի Դուրյանը, հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության

պետ Աշոտ Ահարոնյանը: Իր խոսքում Վալերիյ Օսիպյանը

գնահատեց մասնավորապես ԶՀՎ վարչության անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման վարչության հետ համագործակցությունը: Վալերիյ Օսիպյանը նույնպես արդյունավետ համարեց այդ համագործակցությունը՝ ընդգծելով, որ տարբեր ծրագրերի շրջանակներում ոստիկանության ծառայողները վերապատրաստման դասընթացներ են անցել, մասնակցել սեմինարների, որոնք հնարավորություն են ընձեռում անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերել:



Քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություններ կապի եւ լրատվության վարչության կարելուց եվրոպական երկրների իրավապահ կառույցների հետ համագործակցությունն ու փորձի փոխանակումը: Նատալիա Վուտովան բարձր

հարգեց եւ:

Հասարակական խորհրդի նիստում



Օգոստոսի 31-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության պետի կից հասարակական խորհրդի հերթական նիստը, որը վարում էր խորհրդի նախագահ, ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը:

Ոստիկանության գործունեության վեց ամսվա կատարած աշխատանքը ներկայացրեց ոստիկանության պետի խորհրդական Արտաշես Ավոյանը:

Հասարակական խորհրդի անդամներ Դավիթ Պեղակյանն ու Սեւակ Դազարյանը խոսեցին սեպտեմբերի 1-ից մեկնարկվող «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման մասին, ներկայացրին կատարվելիք աշխատանքները, վեր հանեցին խնդիրներն ու թերությունները:

Չարաշահումներ են բացահայտվել

Ոստիկանության ԿՀԳՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության ղեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, Արմավիրի մարզային վարչության եւ Արմավիրի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ, առանձնապես խոշոր չափերի յուրացման կամ վատնման առերեսույթ հանցագործության դեպք են արձանագրել:



Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել են, որ Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի նախկին ղեկավարը, ըստ քննությանը ձեռք բերված նախնական տվյալների, իր պաշտոնավարման ընթացքում համայնքապետարանում համայնքի ղեկավարի տեղակալի, գրադարանի վարիչի, էլեկտրիկի հաստիքներում հրամանագրել է մտերիմներին, որոնք փաստացի աշխատանքի չեն ներկայացրել, սակայն նրանց

նույն իրականացնող անձին յուրաքանչյուր ամիս վճարվել է ընդամենը 40 հազար դրամ: Այսպիսով, այս պահին քննությանը հայտնի տվյալների համաձայն՝ համայնքի ղեկավարը յուրացրել է ընդհանուր մոտ 4 միլիոն 800 հազար դրամ:

Ըստ քննությանը ձեռք բերված նախնական տվյալների՝ համայնքի ղեկավարը նաեւ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ընկերության հետ կնքել է կեղծ պայմանագիր, ըստ որի՝ համայնքի բյուջեից ընկերության հաշվեհամարին փոխանցվել են գումարներ եւ կանխկցվել:

Հարուցվել է քրեական գործ:

Գողացել էր տնօրենի աշխատանքային

Օգոստոսի 22-ին ոստիկանություն դիմած օտարերկրացի տղամարդը, որը մեր երկրում ՍՊ ընկերության տնօրեն է, գողության վերաբերյալ հաղորդում տվեց: Նրա աշխատանքային գողացել էին 3 միլիոն 500 հազար դրամ ու 14 հազար 500 դրամ:



Դեպքը տեղի էր ունեցել Երեւոնիում: Ոստիկանության Երեւոնու բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, ձեռնարկելով տարաբնույթ միջոցառումներ, բացահայտեցին հանցագործությունը: Օգոստոսի 30-ին, գողությունը կատարելու կասկածանքով, ոստիկանության Երեւոնու բաժնի բերման ենթարկվեց նախկինում մի քանի անգամ դատապարտված 50-ամյա մի տղամարդ: Նա տվել է խոստովանական բացատրություն ու ներկայացվել դեպքի նախաքննությունը վարող տարածքային քննչական բաժնի:

Քննությունը շարունակվում է:

Հայտնաբերվեցին սահմանի

Ոստիկանության կազմակերպված հանցավորության ղեմ պայքարի գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Երեւանի 37-ամյա եւ 27-ամյա բնակիչներ «Լեքսուս» մակնիշի մեքենայով մեկնել են Մեղրի՝ Իրանից թմրանյութ ներկրելու նպատակով:



Տեղեկություններն իրացվեցին ոստիկանության Սյունիքի մարզային վարչության, Մեղրիի բաժնի, պետեկամուտների կոմիտեի եւ սահմանապահ զորքերի ծառայողների աջակցությամբ:

Ոստիկանները բացահայտեցին սպանությունը

Սեպտեմբերի 2-ին ոստիկանությունում տեղեկություն ստացվեց, որ Երեւանի Բոլոստի փողոցի 23-րդ շենքի բնակարաններից մեկում կնոջ դի կա՝ բռնության հետքերով ու վնասվածքներով: Դեպքի վայր մեկնեցին ոստիկանության մի շարք ստորաբաժանումների եւ իրավապահ այլ մարմինների ծառայողներ: Պարզվեց, որ սպանվածը 28 տարեկան էր եւ բնակարանը վարձակալել էր:



Օպերատիվ-հետախուզական համատեղ միջոցառումների արդյունքում պարզվեցին կատարվածի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ սպանության մեջ կասկածվողի ինքնությունը:

Սեպտեմբերի լույս 3-ի գիշերը Վանաձորի հյուրանոցներից մեկում 35-ամյա տղամարդը հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժնի, ապա ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին ու տվեց խոստովանական ցուցմունք:

Տղամարդը կալանավորվել է: Կատարվում է քննություն:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա վճարովի ուսուցման 2019/2020 ուսումնական տարվա ընդունելություն

Շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության մագիստրոսի աստիճան եւ տրվում պետական մոնիչի դիպլոմ: Ուսման տեւողությունը 2,5 տարի է: Ընդունելության կարգին եւ պայմաններին կարող եք ծանոթանալ ոստիկանության www.police.am կամ ոստիկանության կրթահամալիրի www.edupolice.am կայքերում:

Հայտնաբերվեց թմրամիջոց իրացնողը
Ոստիկանները պարզեցին, որ բերման ենթարկված տղամարդը թմրամիջոց վերավաճառող է:
ԷԶ 3

Առանց խուճապի
Արտակարգ իրավիճակներում տարբեր մարդիկ տարբեր կերպ են արձագանքում կատարվածին:
ԷԶ 4

«Սպանություն հաճույքի համար»
Շուտով մարդասպանները հասկացան, որ զոհի ծնողներից փրկագին ստանալն անհույս գործ է:
ԷԶ 5



Large crossword puzzle grid with various clues in Armenian. The grid is filled with letters and some cells contain numbers or specific words related to the clues.

Ուշադրություն (Attention) section containing information about the 'Հարգելի քաղաքացիներ' (Respectable Citizens) program, including eligibility criteria and contact information for the National Agency for Public Administration.

Կեսի - գլխավորը զգացմունքները զսպելն է: Բարդ իրավիճակներում դա դժվար է, բայց փորձեք:

Մեղրագող շակ - 06.09 - 12.09. Առյուծ - Լարված կլիմայի շաբաթվա ավարտը. կոնֆլիկտ ընտանիքի անդամի հետ:

Մեղրագող շակ - 06.09 - 12.09. Աղեղնավոր - Ռիսկի մի դիմեք. պարտքով գումար մի տվեք եւ մի վերցրեք:

Փորձեք լուծել (Try to solve) section featuring two chess puzzles. Each puzzle shows a chessboard with a specific arrangement of pieces and asks for a solution in a certain number of moves.

Նախորդ համարի սկզբնական պատասխանները (Answers from the previous issue) section containing a grid of numbers and letters corresponding to the answers of the previous issue's puzzles.